

ՀՀ տնտեսական իրավիճակի համառոտ վերլուծություն
(2007թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով)*

2007 թվականին շարունակվեց վերջին հինգ տարիների ընթացքում ձեռք բերված երկնիշ տնտեսական աճի միտումը:

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմեց 3139.4 մլրդ. դրամ՝ 13.7%-ով գերազանցելով 2006 թվականի ցուցանիշը: ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը նշված ժամանակաշրջանում կազմեց 103.9%: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2007 թվականին կազմել է 2844 դոլար, 2006թ. 1989-ի դիմաց:

*ՀՆԱ-ի արտադրությունը ըստ հիմնական ճյուղերի 2007թ.
և փոփոխությունը նախորդ տարվա համեմատ (%)*

	Կառուցվածքը		Իրական ծավալի ինդեքսները		Մասնակցությունը հավելվածում	
Համախառն ներքին արդյունք	100	-	113.7	+0.4	13.7	+0.4
Արդյունաբերություն	15.7	- 2.2	103.2	+3.5	0.6	+0.7
Գյուղատնտեսություն	17.5	- 0.6	109.6	+9.1	1.7	+1.6
Շինարարություն	25.6	+1.1	118.4	-20.5	4.5	-3.1
Գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում	32.5	+0.2	112.4	-2.2	4.0	-0.7
Զուտ հարկեր	9.8	+1.6	136.6	+25.4	3.0	+2.0
Ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ	-1.0	0	112.3	+7.7	-0.1	0

2007թ. որոշակիորեն բարելավվել է հանրապետության արդյունաբերության վիճակը: Նշված ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկվել է 716.1 մլրդ. դրամի և իրացվել՝ 719.3 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք: Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը կազմել է 102.6%:

Ի տարբերություն 2006թ., երբ աճ էր գրանցվել միայն հանքագործական արդյունաբերությունում, 2007թ. աճ է արձանագրվել արդյունաբերական արտադրանքի արտադրության տնտեսական գործունեության բոլոր տեսակներում՝ հանքագործական

արդյունաբերությունում – 103.3%, մշակող արդյունաբերությունում – 101.3% և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում – 107.7%:

* Վերլուծությունը կատարված է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա

Ինչպես և նախորդ տարիներին, արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում գերակշռել է մշակող արդյունաբերությունը, որի տեսակարար կշիռը կազմել է 66.7%՝ աճելով 1.7 տոկոսային կետով: Հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 15.9% (նվազումը՝ է 1.7 տոկոսային կետ), էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը՝ 17.4% (մակարդակը պահպանվել է):

Հարկ է նշել արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը սննդամթերքի արտադրությունում – 107.0%, քիմիական արդյունաբերությունում – 119.2%, ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունում – 120.4%, մետաղագործական արդյունաբերությունում – 113.8% և այլն: Շարունակվում է ծավալների անկումը ոսկերչական արտադրատեսակների արտադրությունում – 52.6%:

Տարածքային կտրվածքով, ավանդաբար, արյունաբերական արտադրանքի թողարկման գերակշիռ մասը՝ 48.5%, բաժին է ընկնում Երևան քաղաքին՝ աճելով 4 տոկոսային կետով: Արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալում ցածր տեսակարար կշիռներ են պահպանել նախկինում խոշոր արդյունաբերական տարածաշրջաններ հանդիսացող Շիրակի և Լոռու մարզերը՝ կազմելով համապատասխանաբար 2.3% և 6.0%: Ցածր են մնացել Տավուշի՝ 0.6, Վայոց Ձորի՝ 0.8 և Արագածոտնի՝ 1.1% մարզերի տեսակարար կշիռները:

Չնայած աճի տեմպերի զգալի դանդաղեցմանը՝ ավելի քան 2 անգամ (2006թ-ի 138.9%-ից մինչև 118.4%), 2007թ. հանրապետությունում իրականացվել է 667.3 մլրդ. դրամի շինարարություն, որից շինմոնտաժային աշխատանքները կազմել են 604.9 մլրդ. դրամ կամ 90.6%: Ընդհանուր ծավալից 224.8 մլրդ. դրամը կամ 33.7%-ը բաժին է ընկնում արտադրական նշանակության օբյեկտներին, որից շինմոնտաժային աշխատանքներին՝ 182 մլրդ. դրամ կամ 80.9%:

Հաշվետու ժամանակաշրջանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 469.3 հազ. քառ. մ, ինչը 28.3%-ով բարձր է 2006թ. գործարկված բնակելի մակերեսից:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 633.9 մլրդ դրամ, աճը 9.6%: Բուսաբուծության բաժինը գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմեց 429.9 մլրդ. դրամ, աճը՝ 12.3%, իսկ անասնաբուծության արտադրանքի բաժինը՝ 204.0 մլրդ. դրամ, աճը՝ 4.3%: Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 103.4%:

ՀՀ սպառողական շուկայում առևտրի շրջանառության ծավալը կազմել է 1421.8 մլրդ. դրամ, աճի տեմպը՝ 109.3%, իսկ ծառայությունների ծավալը՝ 542.6 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 121.2%: Սպառողական գների ինդեքսը կազմել է 104.4%:

Բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվել է խանութների միջոցով: Մանրածախ ապրանքաշրջանառության մեջ վերջիններիս տեսակարար կշիռը կազմել է մոտ 51%, ընդ որում 2006թ. համեմատ աճելով 4.5 տոկոսային կետով:

2007թ. բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում շարունակել են առավել մեծ տեսակարար կշիռ ունենալ կապի՝ 28.1% (152.3 մլրդ. դրամ), տրանսպորտի՝ 25.9% (140.6 մլրդ. դրամ) և ֆինանսական գործունեության՝ 7.6% (41.5 մլրդ. դրամ) ծառայությունները:

Ինչպես և նախորդ տարիներին, ծառայությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում Երևան քաղաքին – 87%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 0.5 տոկոսային կետով: Մարզերում ծառայությունների մատուցման տեսակարար կշիռները տատանվում են 0.1%-ից (Վայոց Ձորի մարզ) մինչև 2.9% (Շիրակի մարզ):

2007թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է 1506.5 մլրդ դրամ կամ 4439.2 մլն դոլար, աճի տեմպը 2006թ. նկատմամբ՝ 139.7%: Արտահանման ծավալը կազմել է 394.2 մլրդ դրամ (\$ՕԲ գնով) կամ 1157.4 մլն դոլար, աճի տեմպը՝ 117.5%: Ներմուծման ծավալը կազմել է 1112.3 մլրդ դրամ (ՄԻՖ գնով) կամ 3281.8 մլն դոլար, աճի տեմպը՝ 149.7%: Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 718.1 մլրդ

դրամով կամ 2124.4 մլն դոլարով: Վատթարացավ առևտրային հաշվեկշիռ ՀՆԱ հարաբերակցությունը՝ կազմելով 22.9%, նախորդ տարվա 18.4 %-ի դիմաց:

Այդ ժամանակաշրջանում արտահանման մեջ ԱՊՀ երկրներին բաժին է ընկել ընդհանուրի 30.7% (2006թ.՝ 21.6%)՝ կազմելով 354.8 մլն դոլար, աճը՝ 166.8%, ԵՄ երկրներին՝ 48.9% (2006թ.՝ 48.1%)՝ կազմելով 566.4 մլն դոլար, աճը՝ 119.6%:

Ներմուծման մեջ ըստ ապրանքների ծագման երկրների ԱՊՀ երկրներին բաժին է ընկել ընդհանուր ներմուծման 33.1% (2006թ.՝ 31.8%)՝ կազմելով 1084.5 մլն դոլար, աճը՝ 156.2%, ԵՄ երկրներին բաժին է ընկել 34.7%-ը (2006թ.՝ 34.0%)՝ կազմելով 1139.2 մլն դոլար, աճը՝ 152.7%:

Արտահանման մեջ առավել բարձր տեսակարար կշիռ պահպանեցին հետևյալ ապրանքախմբերը. ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր – 33.7% (ծավալի աճի տեմպը՝ 138.9%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր – 18.5% (71.0%), հանքահումքային արտադրանք – 14.9% (126.1%), պատրաստի սննդի արտադրանք – 12.5% (152.2%): Որպես դրական փաստ պետք է նշել արտահանման ծավալում շարունակվող սարքեր և ապարատներ՝ 137.5%-ով, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 191.2%-ով և իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 224.8%-ով ապրանքախմբերի աճը:

Ներմուծման կառուցվածքում բարձր տեսակարար կշիռները պահպանեցին հանքահումքային արտադրանք – 15.8% (աճի տեմպը՝ 141.8%), մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ – 13.1% (141.0%), վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ – 12.9% (215.1%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր – 10.6% (213.0%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր – 9.0% (95.0%), պատրաստի սննդի արտադրանք – 7.8% (156.6%), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք – 6.7% (146.4%) ապրանքախմբերը:

Հատկանշական է ներմուծման կառուցվածքում արդյունաբերաարտադրական նշանակության ապրանքների՝ մեքենասարքավորումների, նոր տեխնոլոգիաների տեսակարար կշիռների աճը, որոնց ներդրումը կնպաստի տնտեսության շարունակական զարգացմանը:

2007թ. բնակչության դրամական եկամուտները կազմել են 2125.4 մլրդ դրամ, աճի տեմպը 125.7%, իսկ դրամական ծախսերը՝ 2002.0 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 123.6%:

Ինչպես և նախորդ տարիներին, եկամուտներից օգտագործված գումարների մեծ մասը՝ 74.0%-ը բաժին է ընկել ապրանքների գնմանն ու մատուցված ծառայությունների դիմաց վճարմանը (աճի տեմպը՝ 121.2%): Նշենք նաև, որ 2006թ. համեմատ նշված ցուցանիշի տեսակարար կշիռը նվազել է 2.8 տոկոսային կետով: Հատկանշական է, որ ավանդների հավելաճի համար օգտագործվել է եկամուտների 2.4%-ը, ինչը բարձր է նախորդ տարվա ցուցանիշից 0.9 տոկոսային կետով, իսկ արտարժույթի գնման համար՝ 11.7%-ը նախորդ տարվա 12.4%-ի դիմաց: Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ կազմել է 5.8%:

Տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը 2007թ. կազմել է 76922 դրամ, աճը նախորդ տարվա համեմատությամբ 20.4%:

Ամենաբարձր միջին ամսական անվանական աշխատավարձը արձանագրվել է ֆինանսական գործունեության ոլորտում – 220.4 հազար դրամ, ինչը 2.9 անգամ բարձր է հանրապետության միջին աշխատավարձից, իսկ ամենացածրը՝ կրթության (54048 դրամ), առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման (44325 դրամ) ոլորտներում:

2007թ. (գնահատական) տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը կազմել է 1168.0 հազար մարդ, որոնցից 1085.3 հազարը զբաղված էին տնտեսությունում: Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 7.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով: